ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/56

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Վարբադ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 04.03.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.03.2021թ. թիվ 26/26-1/2881-2021 գրությամբ «Վարբադ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 24.02.2021թ. թիվ Ե/40/446-21 գրության հիման վրա 01.03.2021թ. թիվ 26/26-1/2881-2021 գրությամբ նախաձեռնել է «Վարբադ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վարբադ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/56 ընթացակարգի շրջանակներում 05.03.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով նիստի ընթացքում հայտնել է հետևյալը.

«Գտնում ենք, որ «Վարբադ» ՍՊԸ-ն թույլ չի տվել գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ վերջինիս վերագրվել է, որ ներկայացվել է շտկման պահանջ, և Ընկերության կողմից սահմանված ժամկետում շտկումը չի կատարվել:

Խնդիրը կայանում է նրանում, որ Պատվիրատուի արձանագրության ուսումնասիրության արդյունքում երևում է, որ արձանագրվել է անհամապատասխանություն Ընկերության հայտում, այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել շտկման պահանջ ներկայացնելու մի քանի ընկերությունների, բայց չկա կայացրած որոշում՝ «Վարբադ» ՍՊԸ-ի մասով:

Այսինքն՝ արձանագրությամբ «Վարբադ» ՍՊԸ-ին շտկում կատարելու պահանջ չի ներկայացվել»:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.02.2021թ. թիվ Ե/40/446-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից, սեփական կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգը, որին ի թիվս մյուս մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վարբադ» ՍՊԸ-ն:

Մասնակցության հայտի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող առանցքակալների ԳՈՍՏ-երը չեն համապատասխանում հրավերով նախատեսված ԳՈՍՏ-երին: Գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. թիվ 2 որոշմամբ նիստը կասեցվել է և «Վարբադ» ՍՊԸ-ին առաջարկվել է 1 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխանեցնել հավելված 1.1-ը հրավերով սահմանված ԳՈՍՏ-երին: Սահմանված ժամկետում «Վարբադ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացվել է հիմնավորում այն մասին, որ իր առաջարկած ապրանքների ԳՈՍՏ-երը համապատասխան են, սակայն հանձնաժողովը դիտարկելով «Վարբադ» ՍՊԸ-ի ներկայացրած հիմնավորումը արձանագրել է, որ «Վարբադ» ՍՊԸ-ի առաջարկած ԳՈՍՏ-երով առանցքակալները համապատասխան չեն հրավերով սահմանված ԳՈՍՏ-երին՝ քանի որ ГОСТ 520-2011-ը տարածվում է ԳՈՍՏ 8328 և 8338 առանցքակալների վրա՝ բացառությամբ առանցքակալների փորվածքների վրա:

Գնահատող հանձնաժողովի 19.02.2021թ. թիվ 3 որոշմամբ «Վարբադ» ՍՊԸ-ի մասնակցության հայտը՝ բոլոր չափաբաժիններով գնահատվել է անբավարար և մերժվել»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/56 ընթացակարգի շրջանակներում 05.03.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/56 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/56 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «Վարբադ», «Դավիթ-94», «Էներսիս» և «ՀԱԿ ԳՐՈՒՓ» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-երը չեն համապատասխանել հրավերի տեխնիկական բնութագրին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ «Դավիթ-94», «Էներսիս» և «ՀԱԿ ԳՐՈՒՓ» ՍՊ ընկերություններին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 18.02.2021թ. ժամը 16:30-ը, շտկել անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 17.02.2021թ. Ընկերության էլեկտրոնային փոստին՝ vvarbad@mail.ru, ուղարկել է ««ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգ: արձանագրություն համար 2՝ հայտերի բացման և գնահատման նիստի մասին» վերնագրով էլեկտրոնային նամակ՝ կցելով Արձանագրություն_2-9-21.pdf ֆայլը, այն է՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ հայտերի բացման և գնահատման նիստը կասեցվել էր և մասնակիցներին հնարավորություն էր տրվել շտկման: Համապատասխանության փոխարեն «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հիմնավորում, որ իր կողմից առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-երը համարժեք են հրավերով սահմանված ԳՈՍՏ-երին, որպիսի հիմնավորումը հանձնաժողովի կողմից չի ընդունվել և որոշում է կայացվել «Վարբադ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.03.2021թ. թիվ 26/26/2881-2021 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 24.02.2021թ. թիվ Ե/40/446-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «Վարբադ», «Դավիթ-94», «Էներսիս» և «ՀԱԿ ԳՐՈՒՓ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ***«Վարբադ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-երը չեն համապատասխանել հրավերի տեխնիկական բնութագրին***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ ***«Դավիթ-94», «Էներսիս» և «ՀԱԿ ԳՐՈՒՓ» ՍՊ ընկերություններին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 18.02.2021թ. ժամը 16:30-ը, շտկել անհամապատասխանությունը***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 17.02.2021թ. Ընկերության էլեկտրոնային փոստին՝ vvarbad@mail.ru, ուղարկել է ««ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգ: արձանագրություն համար 2՝ հայտերի բացման և գնահատման նիստի մասին» վերնագրով էլեկտրոնային նամակ՝ կցելով Արձանագրություն_2-9-21.pdf ֆայլը, ***այն է՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությունը:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ***Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ հայտերի բացման և գնահատման նիստը կասեցվել էր և մասնակիցներին հնարավորություն էր տրվել շտկման: Համապատասխանության փոխարեն «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հիմնավորում, որ իր կողմից առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-երը համարժեք են հրավերով սահմանված ԳՈՍՏ-երին, որպիսի հիմնավորումը հանձնաժողովի կողմից չի ընդունվել և որոշում է կայացվել «Վարբադ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու վերաբերյալ:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետը հստակ սահմանում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում ***արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ

հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ***ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, սակայն,*** Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության ուսումնասիրության արդյունքում հարկ եմ համարում արձանագրել, որ ***Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, արձանագրելով Ընկերության կողմից առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-երի անհամապատասխանությունը հրավերի տեխնիկական բնութագրին, որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ «Դավիթ-94», «Էներսիս» և «ՀԱԿ ԳՐՈՒՓ» ՍՊ ընկերություններին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 18.02.2021թ. ժամը 16:30-ը, շտկել անհամապատասխանությունը, այսինքն՝ այդ որոշմամբ չի անդրադարձել և չի առաջարկել «Վարբադ» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը, այնուհետև Ընկերության էլ. փոստին ուղարկել է հենց այդ՝ թիվ 2 արձանագրությունը, համաձայն որի վերջինիս շտկում կատարելու պահանջ չի ներկայացվել, ինչի արդյունքում վերջինս զրկվել է օրենքով իրեն վերապահված իրավունքն իրացնելու, այն է՝ մինչև նիստի կասեցման ժամկետի ավարտը անհամապատասխանությունը շտկելու հնարավորությունից, և արդյունքում հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունները մեկնաբանվել են ի վնաս Ընկերության և հանգեցրել վերջինիս հայտը անբավարար գնահատելուն:***

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Վարբադ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.03.2021թ. թիվ 26/26-1/2881-2021 գրությամբ «Վարբադ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**